Հաստատված է
ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2012թ.
մայիսի 12 ի նիստում /արձ.թ
ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի
նախագահ Ս.Ա.Սարգ

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի մրցույթային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ ԻՄ կանոնադրությանը, ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերին և սույն աշխատակարգին համապատասխան;

2. Հանձնաժողովի գործունեության նպատակն իր կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը և դրանց վերաբերյալ եզրակացությունը գիտական խորհրդին ներկայացնելն է;

3. Հանձնաժողովն իր ոլորտին վերաբերող հարցերը քննարկում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի և/կամ տնօրենի հանձնարարությամբ։

4. Հանձնաժողովի գործունեության ժամկետի և կազմի հաստատումը, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրականացվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից։

## II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հանձնաժողովի գործառույթներն են.

1) եզրակացություն տալ ԵՊՀ ԻՄ թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթում թեկնածուների կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ,

2) եզրակացություն տալ պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչման թեկնածուների կողմից ներկայացված փաստաթղթերի ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգին» համապատասխանության վերաբերյալ,

3) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ;

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության; հանձնաժողովի առաջին նիստը հրավիրում է տնօրենը, որի ընթացքում ընտրվում է հանձնաժողովի նախագահ։

հանձնաժողովի նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը։

7. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների երկու երրորդը։

հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ։ Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք։

8. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է նրա կողմից նշանակված հանձնաժողովի անդամը։

9. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվող օրակարգով։

## IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

10. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

2) համակարգում է հանձնաժողովի որոշումների ընդունման գործընթացը,

3) ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի եզրակացությունները,

4) իրականացնում է ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ։

## V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

11. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովում բարձրացված հարցերի քննարկմանը,

2) հանձնաժողովում անցկացված քննարկումների հիման վրա քվեարկությունների միջոցով մասնակցում է որոշումների ընդունմանը,

3) հանձնաժողովի որոշմամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի եզրակացությունները,

4) իրականացնում է ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ։

12. Հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նիստում։